

Էջ 9. Թուփյաճ

Ի. Վ. ՍՏԱԼԻՆԻ ՈՒՍՄՈՒՆՔԸ ԼԵԶՎԻ ՄԱՍԻՆ ԵՎ ՍՈՎԵՏԱԿԱՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐԸ

Ի. Վ. Ստալինի «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը» հանճարեղ աշխատությունը նշանավորում է մարքս-լենինյան ուսմունքի ստեղծագործական զարգացման նոր, բարձր աստիճանը: Մերկացնելով Ն. Յա. Մաոի «լեզվի նոր ուսմունքի» կեղծ, հակագիտական էությունը, ընկեր Ստալինը իմաստուն պարզությամբ շարադրեց մարքսիստական լեզվաբանության հիմունքները:

«Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը» կլասիկ աշխատության մեջ ընդհանրացնելով հասարակության պատմական զարգացման փորձը, հատկապես սովետական հասարակության հարուստ փորձը, ընկեր Ստալինը մարքսիզմը զարգացնում և հարստացնում է նոր դրույթներով և եզրակացություններով, խաղաղության և կոմունիզմի մարտիկներին զինում գաղափարական անպարտելի զենքով:

«Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը» աշխատությունը ստեղծագործական մարքսիզմի խոշորագույն հաղթանակն է, սովետական առաջավոր գիտության հետագա զարգացման անսասան հիմքը:

Անդնահատելի է ընկեր Ստալինի աշխատության նշանակությունը սովետական դրականության և գրականագիտության համար: Մշակելով և զարգացնելով մարքսիզմի կարևոր դրույթները, ընկեր Ստալինը նոր ուղիներ է նշել սովետական գրականության բարձր իդեականության և վարպետության առավել խորացման ու կատարելագործման, գեղարվեստական գրականության սպեցիֆիկ առանձնահատկությունները ավելի խոր և բազմակողմանիորեն հասկանալու համար: Այս տեսակետից բացառիկ մեծ նշանակություն ունի ընկեր Ստալինի ուսմունքը բազիսի և վերնաշենքի փոխհարաբերության մասին, որը նոր հնարավորություններ է ընձեռնում գեղարվեստական գրականության պատմական-զարգացման բնույթը, հասարակական կյանքում նրա դերը և նշանակությունը մեկնաբանելու համար: Սահմանելով լեզվի և վերնաշենքի արմատական տարբերությունը, ընկեր Ստալինը հանճարեղ պարզությամբ մեկնաբանում է վերնաշենքի հիմնական հատկանիշները, որոնք ամբողջովին վերաբերում են նաև գրականությանը և արվեստին: Բայց, ինչպես վերնաշենքային ամեն մի երևույթ, գրականությունը նույնպես ունի իր սպեցիֆիկ առանձնահատկությունները, որոնք կազմում են նրա գոյության հիմքը և նրան տարբերում հասարակական մյուս երևույթներից: Հետևաբար՝ առանց հաշվի առնելու գրականության այդ սպեցիֆիկ առանձնահատկությունները, անհնարին է մեկնաբանել նրա վերնաշենքային բնույթը:

Իր բովանդակությամբ արվեստը չի տարբերվում վերնաշենքային մյուս երևույթներից: Ինչպես հասարակության քաղաքական, իրավական և փիլիսոփայական հայացքների, նույնպես և արվեստի բովանդակությունը օբեկտիվ

իրականությունն է: Բայց գրականության սպեցիֆիկ առանձնահատկությունն այն է. որ նա իրականությունն արտացոլում է գեղարվեստական պատկերներով միջոցով: Կյանքի բազմազան երևույթները, նրանց կապերը և պայմանավորվածությունը միմյանցով, հնի մահացումը և նորի աճումը, իրականության զարգացման ներքին օրինաչափությունները դրսևորվում են լոգոսանուրի և մասնավորի միասնություն հանդիսացող պատկերի միջոցով: Բայց գեղարվեստական պատկերը իրականության մեռած, պասսիվ պատճենը չէ, այլ կենդանի, ակտիվ վերարտադրությունը, իրականության մեկնաբանությունը, որը ակտիվորեն օժանդակում է իր քաղիսին ձևավորվելու և ամրապնդվելու:

Առարկելով նրանց, ովքեր հակադրում էին միմյանց արվեստը և գիտությունը, Բելինսկին գրում է. «...ակնհայտ թյուրիմացություն է տեսնել, որ արվեստը և գիտությունը նույնը չեն և չտեսնել, որ նրանց տարբերությունը, բնավ էլ քովանդակության մեջ չէ, այլ տվյալ քովանդակությունը մշակելու եղանակի մեջ: Փիլիսոփան խոսում է ախլոգիզմների, բանաստեղծը պատկերների և նկարագրությունների միջոցով, բայց նրանք ասում են նույն բանը: Քաղաքատնտեսը զինվելով վիճակագրական թվերով, ապացուցում է, ներգործելով իր ընթերցողների կամ ունկնդիրների վրա, որ այսինչ դասակարգի դրությունը հասարակության մեջ բավականին լավացել է կամ բավականին վատացել է, այս և այս պատճառների հետևանքով: Բանաստեղծը զինվելով իրականության կենդանի և ցայտուն նկարագրությամբ, ներգործելով իր ընթերցողների երևակայության վրա, ճիշտ պատկերներով ցույց է տալիս, որ այսինչ դասակարգի դրությունը հասարակության մեջ բավականին լավացել է կամ վատացել, այս և այս պատճառներով: Մեկը ապացուցում է, մյուսը ցույց է տալիս և երկուսն էլ համոզում են, միայն մեկը տրամաբանական փաստարկումներով, մյուսը նկարագրություններով»¹:

Մասնավոր սեփականության և շահագործման վրա հիմնված հասարակական ֆորմացիաներում իրականությունը հարաբերական ճշտությամբ արտացոլող գեղարվեստական երկերո ավելի լայն և բազմակողմանի են վերարտադրում հասարակության նյութական և հոգևոր կյանքի բովանդակությունը, նրա զարգացման տենդենցները, քան նույն ժամանակաշրջանի քաղաքական, իրավական կամ փիլիսոփայական հայացքները:

Մարքսիզմի կլասիկները հատուկ ուշադրություն են դարձրել գեղարվեստական գրականության այդ առանձնահատկության վրա և հստակապես բարձր են գնահատել ռեալիստական գրականության ճանաչողական նշանակությունը և դերը հասարակության առաջընթաց զարգացման գործում:

Էնգելսը գրում է, որ Բալզակի «Մարդկային կատակերգություն»-ից նա ավելի շատ քան իմացավ ֆրանսիական հասարակության մասին, նույնիսկ տնտեսագիտական մանրամասնությունների իմաստով, քան նույն ժամանակաշրջանի բոլոր պրոֆեսիոնալ պատմագիրների, տնտեսագետների և վրձակագիրների գրքերից միասին վերցրած:

Մեկնաբանելով Լ. Տոլստոյի ստեղծագործության համաշխարհային նշանակությունը, Վ. Ի. Լենինը գրում է. «Նա կարողացել է շարմանալի ուժով արտահայտել ժամանակակից կարգերից ճնշված լայն մասսաների տրամադրու-

¹ В. Г. Белинский. Собрание сочинений, том 3, 1948, стр. 797—798.

թյունը, նկարագրել նրանց դրությունը, արտահայտել նրանց բողոքի ու զայրույթի տարերային զգացումը»¹

Տոլստոյի այդ մեծագույն նվաճումը կյանքի ճշմարտացի վերարտադրման արդյունք էր և դրա հետևանքով նրա ստեղծագործությունների բովանդակությունը շատ ավելի խորն է, ավելի է համապատասխանում պատմական իրականությանը, քան նրա իդեալական մտահղացումը:

Իրականության ճշմարտությունը երբեմն հանդես է գալիս նույնիսկ հակառակ գրողի քաղաքական ոեակցիոն հայացքների: Ընկեր Ստալինը գնահատելով գրող Բուլգակովի «Տուրքինների օրերը» պիեսը, գրում է.

«Ինչ վերաբերում է հատկապես «Տուրքինների օրերը» պիեսին, ապա այդ պիեսն այնքան էլ արդեն վատ չէ, որովհետև այն ավելի շատ օգուտ է տալիս, քան վնաս: Մի՞ մոռանաք, որ այդ պիեսից հանդիսատեսի ստացած հիմնական տպավորությունը բուլշևիկների համար նպաստավոր տպավորություն է. «եթե նույնիսկ այնպիսի մարդիկ, ինչպես Տուրքինները, հարկադրված են զենքը ցած դնել և հնազանդվել ժողովրդի կամքին, իրենց գործը համարելով վերջնականապես տանուլ տված, — նշանակում է, բուլշևիկները անպարտելի են, նրանց, բուլշևիկներին, ոչինչ չես կարող անել»: «Տուրքինների օրերը» բուլշևիզմի ամեն ինչ խորտակող ուժի ցուցադրումն է:

Բհարկե, հեղինակը որեւէ չափով «մեղավոր չէ» այդ ցուցադրման համար: Իայց մեզ ի՞նչ, որ այդպես է»² Բուլշևիզմի ամեն ինչ խորտակող ուժի ցուցադրումը «Տուրքինների օրերը» պիեսում, կյանքի ճշմարտության հաղթանակն է, ոեալիստական մեթոդի հաղթանակը, որը հանդես է եկել հակառակ հեղինակի հակասովետական հայացքների, թեև այդ հայացքները անխուսափելիորեն սահմանափակել են կյանքի ճշմարտության լիակատար դրսևորումը գեղարվեստական երկի մեջ:

Այն ստեղծագործությունները, որոնց ձևը ավելի խոր և բազմակողմանի է ընդգրկում պատմական իրականության առաջավոր բովանդակությունը, նրանք ավելի ակտիվ կերպով են օժանդակում հնի վերացմանը և նորի առաջացմանը: Այդպիսի երկեր ստեղծել է ոեալիստական գրականությունը, որը եղել է անցյալի գրականության հիմնական շարժիչ ուժը: Ռեալիզմը միշտ էլ հակադրվել է ճնշմանը և շահագործմանը և որքան ավելի խորն է եղել այդ հակադրությունը, այնքան ավելի ոեալիզմը եղել է մերկացնող, իր էությունմբ ավելի ճշմարտացի, ավելի ժողովրդային: Հիշենք 19-րդ դարի ռուսական կլասիկ ոեալիզմը, որը սերտորեն կապվելով ունուցիոն մասսաների ազատագրական շարժումների հետ, արտահայտելով ժողովրդի արմատական շահերը, դարձավ մարդկության գեղարվեստական զարգացման ամենաբարձր աստիճանը նախասովետական ժամանակաշրջանում: 19-րդ դարի ռուս գրականության լավագույն տրադիցիաների, Լենինի և Ստալինի կողմից գիտականորեն մշակված ու հիմնավորված տրադիցիաների շարունակությունն է սովետական գրականությունը:

Ընկեր Ստալինը գրում է. «Բազիսը հասարակության տնտեսակարգն է նրա զարգացման տվյալ էտապում: Վերնաշենքը հասարակության քաղաքական, իրավական, կրոնական, գեղարվեստական, փիլիսոփայական հայացք-

¹ Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 16, էջ 420:

² Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 11, էջ 374-375:

ներն են և դրանց համապատասխանող քաղաքական, իրավական և այլ հաստատությունները:

Ամեն մի բազիս ունի իրեն համապատասխանող իր վերնաշենքը: Ֆեոդալական հասարակարգի բազիսն ունի իր վերնաշենքը, իր քաղաքական, իրավական և այլ հայացքներն ու դրանց համապատասխանող հաստատությունները, կապիտալիստական բազիսն ունի իր վերնաշենքը, սոցիալիստական իրենքը: Եթե փոխվում ու լիկվիդացվում է բազիսը, ապա դրանից անմիջապես հետո փոխվում և լիկվիդացվում է նրա վերնաշենքը. եթե նոր բազիս է ծնվում, ապա դրանից անմիջապես հետո ծնվում է նրան համապատասխանող վերնաշենքը»¹:

Ամեն մի հասարակության գեղարվեստական հայացքները առաջին հերթին դրսևորվում են տվյալ բազիսի արդյունք հանդիսացող արվեստի արտադրանքի մեջ, որը պատմական տվյալ ժամանակաշրջանի գեղարվեստական վերարտադրությունն է: Երբ փոխվում և լիկվիդացվում է բազիսը, ապա վերանում են նաև տվյալ բազիսին հատուկ գեղարվեստական հայացքների ստեղծման հասարակական հիմքերը, գեղարվեստական հին հայացքները դառնում են անկրկնելի նոր ստեղծված բազիսի և նրա համապատասխան վերնաշենքի պայմաններում: Այդ չի նշանակում իհարկե, որ տվյալ բազիսի և վերնաշենքի լիկվիդացման հետ վերանում են ընդհանրապես այդ ժամանակաշրջանում ստեղծված արվեստի երևույթները:

Մեկնաբանելով կուլտուրայի և լեզվի տարբերությունը, ընկեր մտալինը ընդգծում է կուլտուրայի զարգացման կարևոր առանձնահատկությունը՝ այն, «որ կուլտուրան իր բովանդակությամբ փոխվում է հասարակության զարգացման յուրաքանչյուր նոր ժամանակաշրջանի հետ»²: Որպես վերնաշենքային երևույթ, կուլտուրան որոշ բազիսի արգասիք է, բայց ի տարբերություն վերնաշենքային մյուս երևույթների, կուլտուրան ոչ թե լիկվիդացվում է հին բազիսի հետ, այլ փոխվում է հասարակության զարգացման յուրաքանչյուր նոր դարաշրջանի հետ, ձեռք բերում նոր բովանդակություն:

Սեփականատիրական հասարակությունների պատմական զարգացման ընթացքում կուլտուրայի, այդ թվում և գեղարվեստական գրականության զարգացումը տեղի է ունեցել դասակարգային բուռն պայքարի մեջ, պայքար՝ հասարակական սուաչավոր և հետադիմական իդեաների, թեորիաների և հայացքների միջև, որը գրականության և արվեստի մեջ ձևավորվել է որպես պայքար ռեալիստական և հակառեալիստական ուղղությունների միջև: Եթե նոր, առաջավոր իդեաներն ու թեորիաները գրսևորվել են գերազանցապես հակառեալիստական ուղղությունների՝ ռեալիզմի, սիմվոլիզմի, ֆուրմալիզմի և այլ ուղղությունների միջոցով. ծառայել են հասարակության մահացող ուժերի շահերին, պաշտպանել շահագործման «հավերժական սկզբունքները» և արգելակել են հասարակության առաջընթաց զարգացումը:

¹ Ի. Վ. Մոտալին, Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը, Հայպետհրատ, 1951թ., էջ 10—11:

² Նույն տեղում, էջ 48:

Միայն սոցիալիզմի պայմաններում են լիկվիդացվում ունակություն իդեա-
ների ստեղծման հիմքերը և անսահման հնարավորություններ ստեղծվում ամե-
նաառաջագիմական փոփոխությունների ու թեորիաների զարգացման համար: Հիմնվե-
լով բոլշևիկյան պարտիայի հզորագույն իդեաների վրա, սովետական գրա-
կանությունը ուժովում է հասարակության առաջնությամբ շարժումը հեշտացնե-
լու, իրականությունը վերափոխելու անհամեմատ ավելի մեծ ուժով, քան անց-
յալի նույնիսկ ամենաառաջագիմական գրական ուղղությունները:

Հին բազիսի և հին վերնաշենքի փոփոխման և լիկվիդացման հետ տվյալ
հասարակության զեղարվեստական հայացքները մնում են որպես անկրկնելի
երևույթ հետագա ժամանակների համար: Հիշենք Մարքսի նշանավոր դիտո-
ղությունը հունական արվեստի մասին: «Հայտնի է, որ հունական դիցաբա-
նությունը ոչ միայն հունական արվեստի զինարանն էր, այլև նրա հոգը:
Մի՞թե հնարավոր է, որ բնության և հասարակական հարաբերությունների
այն բմբռնումը, որը կազմում է հունական երևակայության և, հետևաբար,
հունական արվեստի հիմքը, գոյություն ունենա սելֆակտորի, երկաթուղիների,
լոկոմոտիվների ու էլեկտրական հեռագրի ժամանակ»¹: Այնուհետև բա-
ցատրելով հույների արվեստի թուլանքի գաղտնիքը, Մարքսն ասում է
«Երանց արվեստի խաղչանքը մեզ համար հակասական չէ այս անգարգացած
հասարակակա՞ն, միջավայրի նկատմամբ, որից բողբոջել է այն: Ավելի շուտ՝
նրանց արվեստը հետևանք է այդ միջավայրի և անբակտեչներն կապված է
այն հանգամանքի հետ, որ չհասունացած հասարակական պայմանները,
որոնք մեջ ծագել է այդ արվեստը և որոնց մեջ միայն կարող էր ծագում առ-
նել, երբեք չպիտի կարողանան վերադառնալ»²:

Մարքսի ձեռագիրը թեև մնում է անավարտ, բայց նրա հիմնական դրույ-
թը միանգամայն պարզ է, որ հունական արվեստը, հատկապես էպոսը որոշ
բաղիսի արդյունք է, տոհմային հասարակության չափազանց անգարգացած
արտագրության քայքայման արդյունք: Երև հետևանքով անհատի և հասա-
րակության միասնությունը պրիմիտիվ բնույթ էր կրում: Պրիմիտիվ էին նաև
անհատական ձգտումները, անհատը գրեթե ամբողջովին ենթարկված էր որ
համար օտար արտաքին բնությունը, որն արտացոլում էր դիցաբանական
պատկերացումների միջոցով: Այդ պատճառով «Ելիականի» և «Ողիսականի»
հերոսները անհատականություններ չեն բառիս ժամանակակից իմաստով, այլ
տոհմային հասարակության որոշ կողմերի մարմնացումներ:

«Որքան էլ վեհատեսիլ են երևում մեզ այս դարաշրջանի մարդիկ, — գրում
է Էնգելսը, — նրանք այնուամենայնիվ միմյանցից բոլորովին չեն տարբեր-
վում. ինչպես Մարքսն է ասում, նրանք դեռ կախված են նախնադարյան
հասարակության պորտալարից»³:

Անցյալ ժամանակներում ամեն մի էպոսի ստեղծման համար հիմք են
եղել անհատի և կոլեկտիվի միասնությունը և բնության ու հասարակու-
թյան դիցաբանական բմբռնումը: Այս երկու տարրերից որևէ մեկի բացակա-
յությունը զեպում այլևս չեն ստեղծվում էպիկական երկեր: Բնորոշ է այն
հանգամանքը, որ էպոս ստեղծելու բուրժուական գրականության բազմաթիվ
փորձերը ապարդյուն անցան, որովհետև կապիտալիստական բազիսի և վեր-

¹ Կ. Մարքս, Բազաբանտեսության բնագիտության շուրջը, Գոտսհրատ, 1932, էջ 37—38:

² Կ. Մարքս, Ֆ. Էնգելս, Լոտիք Էրկեր, հատ. 2, էջ 321:

նաշենքի պայմաններում վերացել էին էպոսի ստեղծման նախապայմանները:

Ընկեր Ստալինը գրում է. «...ֆեոդալական մասնատվածության լիկվիդացմանը և ազգային շուկայի գոյացմանը զուգընթաց ժողովուրդների (НАРОДНОСТН) զարգացան ու դարձան ազգ, իսկ ժողովուրդների լեզուները — ազգային լեզուներ»¹ Ազգերի կազմավորման պրոցեսում ստեղծվում և զարգանում է նաև ազգային կուլտուրան, որի բազկացուցիչ մասն է գեղարվեստական գրականությունը: «Իհարկե, ազգի տարրերը, — գրում է ընկեր Ստալինը, — լեզուն, տերիտորիան, կուլտուրական ընդհանրությունը և այլն — երկնքից չեն ընկել, այլ ստեղծվել են կամաց-կամաց, դեռ մինչ կապիտալիստական ժամանակաշրջանում»² Բուրժուական հասարակության գրականության և կուլտուրայի տարրերը նույնպես ստեղծվել են մինչ կապիտալիստական շրջանում, բայց կապիտալիստական բազիսի վրա ստեղծված գրականությունը իր բովանդակությամբ և ձևով տարրերվում է նախորդ ժամանակաշրջանների գրականությունից:

Միջնադարյան տիբապետուղ դասակարգի գրականությունը ամբողջությամբ ներծծված էր կրոնական իդեոլոգիայով և ծառայում էր ֆեոդալական բազիսի ամրապնդմանը: Պատահական չէ այն հանգամանքը, որ միջնադարյան կարգերի դեմ ուղղված սոցիալական և քաղաքական շարժումները աղանդավորական բնույթ էին կրում, որովհետև միջին դարերում եկեղեցին ամենամեծ հեղինակությունն էր, այդ հեղինակությունից ելնում էին նաև աղանդավորները, հենց այդ հեղինակության դեմ կռվելու համար: Ը հակադրություն միջնադարյան կապանքների և կրոնական իդեոլոգիայի, որը տարածվում էր մտավոր գործունեության ողջ բնագավառի վրա, դատապարտում աշխարհիկ կյանքը, մարդու բնական ձգտումները և զգացմունքները, բուրժուազիան հանդես էր գալիս հումանիստական իդեալներով, մարդկային անհատի իրավունքների պաշտպանությամբ. բայց այդ հումանիզմը իր ձևավորման շրջանում իսկ կրում էր բուրժուական ֆունկցիոնը: Նրա հիմքում ընկած էր ազատ մրցման, «ամեն մեկը իր համար» սկզբունքը: Դրանից էլ բխում էր բուրժուական աշխարհայացքի հիմքում ընկած անհատապաշտությունը, որը իմպերիալիզմի դարաշրջանում վերածվում է բացահայտ մարդատյացության, գաղափարների և գոյության և ռասայական քարոզի:

Բուրժուական ազգությունների կազմավորման հետ ստեղծվող գրականություն հիմնական առանձնահատկություններից մեկն այն է, որ նա ստեղծվում է ազգային միասնական լեզվով, հարստացնում, հզկում, մշակում և նոր աստիճանի է բարձրացնում ազգային լեզուն: Բայց միասնական լեզվով ստեղծվող գրականությունը իր բովանդակությամբ միատարր, միասնական չէր: «Քննադատական դիտողություններ ազգային հարցի մասին» աշխատության մեջ Լենինը գրում է. «Կա երկու ազգ ժամանակակից յուրաքանչյուր ազգի մեջ, — կասենք մենք բոլոր նացիոնալ-սոցիալիստներին: Կա երկու ազգային կուլտուրա յուրաքանչյուր ազգային կուլտուրայի մեջ: Կա Պուրիշկևիչների, Բուչկովների և Ստրուվենների վելիկոռուսական կուլտուրա, — բայց և կա վելիկոռուսական կուլտուրա, որը բնորոշվում է Չերնիշևսկու և Պլեխանովի անուններով: Հենց այդպիսի «Եկու կուլտուրա էլ կա ուկրաինականության

¹ Ի. Վ. Ստալին. Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը, էջ 27—28:

² Ի. Վ. Ստալին. Երկեր, հատ. 11, էջ 382:

մեջ, ինչպես նաև Գերմանիայում, Ֆրանսիայում, Անգլիայում, հրեաների մոտ և այլն»¹

Եթե Պուրիշկինների, Գուչկովների և Ստրովենների տերտերական, բուրժուական կուլտուրան սեհարյուրակային նացիոնալիզմի արտահայտությունն էր, ապա Չերնիշևսկու և Պլեխանովի անուններով նշանավորվող կուլտուրան արտահայտում էր ուսման մեծ ժողովրդի ազատագրական տենչերը, քարոզում էր տարբեր ազգությունների բանվորների միաձուլություն՝ լոնդոնում ճնշման և շահագործման, Յուրաքանչյուր ազգային կուլտուրայի մեջ երկու կուլտուրայի առկայությունը կապիտալիստական բազիսի արդյունք էր։ Մազմավորվելով ֆեոդալական հասարակության ընդերքում, բուրժուազիան շոշնչացրեց դասակարգային հակասությունները. նա միայն հնի տեղ դրեց նոր դասակարգեր, ճնշման ու շահագործման նոր եղանակներ։ Կապիտալիզմի ողջ պատմության անհաշտելի հակասությունը՝ աշխատանքի և կապիտալի հակասությունը, պրոլետարիատի և բուրժուազիայի անտագոնիզմը դրսևորվում է նաև ազգային կուլտուրայի և գրականության մեջ։

Բուրժուական գրականության հիմնական թեման անհատի և հասարակության պայքարն է, անհատի ձգտումների, ստեղծագործական կարողությունների անխուսափելի կործանումը։

Բուրժուական գրականության այդ բնորոշ գիծը, այդ գրականության արմատական տարբերությունը սոցիալիստական գրականությունից, բնկեր Ստալինը բնութագրել է Ա. Մ. Գորկու «Աղջիկը և մահը» հեքիաթի էջերից մեկի վրա կատարած մակագրությամբ՝ «Այս գործն ավելի ուժեղ է, քան Գյոթեի «Ֆաուստը» («Սերը հաղթում է մահին»)։

«Ֆաուստը» բուրժուական գրականության ամենաբնորոշ երկերից մեկն է, որտեղ Գյոթեն արտահայտել է բնության ճանաչումը խորացնելու, բնությունը վերափոխելու և իսկական մարդկային սիրո վեհ ձգտումը։ Բայց բուրժուական շահագիտական կյանքի պայմաններում, որտեղ մարդու արժանապատվությունը, նրա ստեղծագործական ունակությունները վերածվում են փոխանակային արժեքի, անխուսափելիորեն խորտակվում են մարդու լավագույն ձգտումները, մահը հաղթում տանում է ամեն ինչ։

Ի տարբերություն Գյոթեի, Ա. Մ. Գորկին, որի աշխարհայացքը ձևավորվել է մարքս-լենինյան ուսմունքի վրա, մարդու վեհության, նրա ստեղծագործական անսպառ ունակությունների քանաստեղծն է։ Մեռնում են ունհատներ, անցնում են մարդկային սերունդները, բայց բնությունը վերափոխող մարդկային ուժի հանդեպ անգոր է մահը։ Կյանքի սերը հաղթում է մահին, մահը հաճանքում է մարդու անաղարտ էության առջև, մարդը դառնում է ամենից բարձր։ Այսպիսին է «Աղջիկը և մահը» հեքիաթի իդեան, սոցիալիստական գրականության հիմնական իդեաններից մեկը։

Կապիտալիստական արտագրությունը իր զարգացման վաղ շրջանում նախապայմաններ ստեղծեց արվեստի ծաղկման համար, բայց այդ արտադրությունը միաժամանակ, ինչպես նշել է Մարքսը, թշնամի է հոգեկան արտադրության մի քանի ճյուղերին, ինչպես արվեստը և պոեզիան։ Բուրժուական հարաբերությունների զարգացման հետևանքով, ասում է Մարքսը, «Անհետացավ նահապետական ամեն ինչ, որովհետև շահագիտությունը, առ ու ծախս հանդի-

¹ Վ. Ի. Լենինը, Երկեր, հատ. 20, էջ 20 - 21։

սանում են միակ կապը, դրամական հարաբերությունը հանդիսանում է միակ հարաբերությունը ձեռնարկատիրոջ և բանվորի միջև...

Ճիշտ այդպես բոլոր այսպես կոչված աշխատանքի բարձր տեսակները, մտավոր, զեղարվեստական և այլն, վերածվեցին Խոստրի առարկաների և զրկվեցին, այդպիսով, իրենց նախկին լուսապսակից»¹

Իմպերիալիզմի դարաշրջանում, երբ մեռնող կապիտալիզմի հակասությունները հասնում են ծայրահեղ սահմանների, երբ պրոլետարական ռեվոլյուցիան անմիջական պրակտիկայի հարց է դառնում, առավել սուր կերպով է հանդես գալիս կապիտալիզմի իշխմանը արվեստի նկատմամբ: Վերջնականապես հրաժարվելով անցյալի ռեալիստական տրադիցիաներից, իրականությունից զեղարվեստական ճանաչումը համարելով անհնարին, բուրժուական արվեստը ապավինեց կրոնին և միստիցիզմին: Բուրժուական արվեստի մեջ լայն տարածում գտան «արվեստը արվեստի համար» ռեալիզմը, թեոֆան, անհատապաշտությունը, անկումային ուղղությունները, ֆորմալիզմը, սիմվոլիզմը, ֆուտուրիզմը, ալմեիզմը և այլն: «Պարտիական կազմակերպություն և պարտիական գրականություն» հոդվածում, մերկացնելով բուրժուական անհատապաշտների կեղծիքը արվեստի ազատության մասին, լենինը գրել է. «Փողի իշխանության վրա հիմնված հասարակության մեջ, այն հասարակության մեջ, որտեղ ազատության և մասնավոր աշխատավորության մասնատները և պորտաբուրժուան են անում մի բուռն հարուստներ, չի կարող իրական և իսկական «ազատություն» լինել: Արդյոք ազատ էք դուք ձեր բուրժուական հրատարակչից, պարոն գրող, ձեր բուրժուական հասարակությունից, որը ձեզնից պոռնոգրաֆիա է պահանջում շրջանակներում ու նկարներում, պոռնկություն՝ որպես «սրբազան» բեմական արվեստի «հավելում...»: Բուրժուական գրողի, զեղարվեստագետի, դերասանուհու ազատությունը լուրջ քողարկված (կամ կեղծավորաբար քողարկվող) կախումն է փողապարկից, կաշառումից, ռոճիկից»²

Համաշխարհային երկրորդ պատերազմից չետու քայքայված և ուլանդակված բուրժուական ռեալիզմը գրականությունը հանդես եկավ ներկայում, թունավոր դիակի իր իսկական կերպարանքով: Անգլո-ամերիկյան կառավարող շրջաններին համակած սարսափը դեմոկրատիայի և սոցիալիզմի լադերի հանդեպ, իմպերիալիստական մոդեռնների պատերազմական մոլուցքը իրենց ամբողջ ալլանդակությամբ արտահայտվեցին բուրժուական «գրականություն» և «արվեստի» մեջ:

Իմպերիալիստական ռեալիզմի նորից հրապարակ նետեց ֆաշիստական ռասալական թեոֆան, մարգարտացողությունը, դազանային շովինիզմը: Լիարդակերական դառանցանքի վերածված բուրժուական «գրականություն» փառաբանում է մահը, կեղծիքը, դավաճանությունը, անասնական բնագոյները, նա ձգտում է աշխատավոր մասսաներին թունավորել կոսմոպոլիտիզմով, քայքայվող իմպերիալիզմի ամենավնասակար թուլություն: Իդեալականացնելով զոդերին, պոռնիկներին, մարդասպաններին և դեզներատներին, ժամանակակից բուրժուական գրողները հանգում են աշխարհի և մարդու ժխտմանը: Տխրահռչակ Սարտրը ասում է, որ «աշխարհը ավելի հեշտ կարող է լուր անալ առանց մարդու»:

¹ К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, т. V, стр. 574.

² Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 10, էջ 44:

խեղդելով առաջադիմական մաքի ամեն մի արտահայտություն, անգլո-ամերիկյան իմպերիալիզմը գրական այդ կեղտաջուրը էրզաց ապրանքների և իսկական կապանքների հետ առատորեն տարածում է մարշալացված երկրորդներում:

Բայց անհնար է ետ շրջել պատմության առաջընթաց շարժումը: Ի հակադրություն իմպերիալիստական ռեակցիայի և ֆաշիստական խավարամոլության, բուրժուական երկրներում ստեղծվում են իսկական արվեստի երկեր, օրրստօրե աճում են խաղաղության և դեմոկրատիայի ուժերը, որոնց պատկանում է ապագան:

* *

Ընկեր Ստալինը գրում է. «Վերնաշենքը ծնունդ է առնում բազիսից, բայց ադ ամենեին չի նշանակում, թե այն միայն արտացոլում է բազիսը, թե այն պասսիվ է, շեղոք, անտարբեր է վերաբերվում իր բազիսի ճակատագրին, դասակարգերի ճակատագրին, հասարակարգի բնույթին: Ընդհակառակը, լույս աշխարհ գալով, նա դառնում է մեծագույն ակտիվ ուժ, ակտիվորեն օժանդակում է իր բազիսին՝ ձևավորվելու և ամրապնդվելու, ձեռք է առնում բոլոր միջոցները, որպեսզի նոր հասարակարգին օգնի մինչև վերջը ջախջախելու և լիկվիդացնելու հին բազիսն ու հին դասակարգերը»¹:

Վերնաշենքի ակտիվ դերի մասին ստալինյան հանճարեղ դրույթի խոր ճշմարտացիությունը ցայտուն կերպով հանգես է գալիս գեղարվեստական գրականության պատմական զարգացման մեջ: Լինելով որոշ բազիսի արդյունք, գրականությունն ակտիվորեն օժանդակում է իր բազիսին՝ ձևավորվելու և ամրապնդվելու, նա դառնում է հզոր զենք նոր դասակարգի ձեռքին՝ հին բազիսն ու հին դասակարգերը ջախջախելու և լիկվիդացնելու համար: Գեղարվեստական գրականության այս առանձնահատկությունը առավելագույն ուժով հանդես է գալիս սոցիալիստական բազիսի ծնունդ հանդիսացող սովետական գրականության մեջ:

Բնութագրելով Հոկտեմբերյան Ռևոլյուցիայի միջազգային նշանակությունը, ընկեր Ստալինը ասում է, որ Հոկտեմբերյան Ռևոլյուցիան ինտերնացիոնալ, համաշխարհային կարգի ռևոլյուցիա է, որովհետև այն նշանակում է մարդկության համաշխարհային պատմության մեջ արմատական շրջադարձ կապիտալիստական աշխարհից դեպի նոր, սոցիալիստական աշխարհ, արմատական շրջադարձ ամբողջ աշխարհի շահագործվող մասսաների կյանքի ու կենցաղի, բարքերի ու տրադիցիաների, կուլտուրայի և ամբողջ հոգևոր կերպարի մեջ: «Վերջին 30 տարիների ընթացքում — գրում է ընկեր Ստալինը, — Ռուսաստանում լիկվիդացվեց հին, կապիտալիստական բազիսը և կառուցվեց նոր, սոցիալիստական բազիս: Դրան համապատասխան լիկվիդացվեց կապիտալիստական բազիսի վերնաշենքը և ստեղծվեց սոցիալիստական բազիսին համապատասխանող նոր վերնաշենք»²:

Սոցիալիստական բազիսը իր բնույթով արմատապես տարբերվում է նախորդ ֆորմացիաների բազիսներից, որոնք հենված էին մասնավոր սեփականության և շահագործման վրա, որոնց հատուկ էր դասակարգային անտապոնիզմը: Սոցիալիստական բազիսի պայմաններում հիմնովին ոչնչացվում է

¹ Ի. Վ. Ստալին, Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը, էջ 13:

² Նույն տեղում, էջ 11:

ձնշումը և շահագործումը, վերացվում են անտագոնիստական դասակարգերը: Այդ պատճառով սոցիալիստական բազիսը և նրա համապատասխան վերնաշենքը ունեն զարգացման միանգամայն այլ օրինաչափություններ, որոնք պայմանավորում են սովետական գրականության զարգացման առանձնահատկությունները, նրա բնույթը և էությունը, նրա ակտիվ դերը սովետական հասարակության կյանքում: Սոցիալիստական բազիսի գերազանցությունը կապիտալիստական բազիսի նկատմամբ արտահայտվում է նաև այն բանում, որ ձեռք կապիտալիզմը թշնամի է գրականության և արվեստի զարգացմանը, ապա կոմունիստական հասարակության մեջ ստեղծվում են արվեստի լիակատար ծաղկման բոլոր նախապայմանները: Ամերիկյան առաջին բանվորական դեմոկրատիկ հետ ունեցած զրույցի ժամանակ, բնութագրելով կոմունիստական հասարակությանը, ընկեր Ստալինը ասում է, որ դա կլինի այնպիսի մի հասարակություն, «որտեղ գիտությունը և արվեստը լիակատար ծաղկման հասնելու համար բավականաչափ բարենպաստ պայմաններ կվայելեն»:¹

«Հոկտեմբերը մարքսիզմի հաղթանակն է իդեոլոգիայի մեջ» ասում է ընկեր Ստալինը: Մարքսիզմի իդեոլոգիական հաղթանակի փայլուն արտահայտություններից մեկը սովետական գրականությունն է, որը հիմնվելով բնության և հասարակության զարգացման օրենքների մասին միակ ճիշտ էփություն վրա, ճշմարտացիորեն արտացոլելով սոցիալիզմի կառուցման հերոսական ուղին, դարձել է աշխարհի ամենագաղափարական, ամենաառաջավոր, ամենաոռնույցիոն գրականությունը:

Սովետական գրականությունը սոցիալիստական հասարակության գեղարվեստական պատմությունն է, աշխարհում առաջինը սոցիալիզմ կառուցող մարդու հերոսական աշխատանքի պատմությունը: Մեծ գրականության մեծագույն արժանիքն այն է, որ նա կերտել է սովետական ժողովրդի բոլոր հաղթանակների ոգեշնչող և կազմակերպող բոլշևիկյան պարտիայի հիանալի մարդկանց կերպարները, կոմունիզմի մեծագույն ճարտարապետների լենինի և Ստալինի կերպարները:

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Ռևոլուցիայի հաղթանակից հետո նոր ստեղծվող սովետական գրականությունը դարձավ սոցիալիստական վերնաշենքի բաղկացուցիչ մասը, աշխատավորությանը կոմունիզմի ոգով դաստիարակելու հզոր զենքը: Մեր պարտիայի 8-րդ համագումարը նշեց, որ «Չկան գիտության և արվեստի այնպիսի ձևեր, որոնք կապված չլինեն կոմունիզմի մեծ իդեաների և կոմունիստական տնտեսության ստեղծման անհամար բազմազան աշխատանքի հետ»: Ընդգծելով նոր ստեղծվող սովետական արվեստի անխզելի կապը կոմունիզմի մեծ իդեաների և կոմունիստական տնտեսության ստեղծման բազմազան աշխատանքի հետ, բոլշևիկների պարտիան միաժամանակ վճռականապես մերժում էր քուրժուական անկումային, ֆորմալիստական «արվեստի» տարրերը նորաձևությունները, որոնք հանդես էին գալիս պրոլետարական արվեստ ներկայացնելու հավանությունամբ:

Զախցախելով «պրոլետարականների» բուրժուական ռեակցիոն տեսությունը, որի համաձայն իբր թե պրոլետարական կուլտուրան պետք է զարգանա ժխտելով անցյալի ժառանգությունը, կտրված լինելով սովետական կյանքից, լենինը պարզ և որոշակի ցուցում տվեց. «Սովետական Բանվորա-րյու-

¹ Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 10, էջ 154:

դացիական Ռեսպուբլիկայում լուսավորության գործի ամբողջ գրվածքը ինչպես քաղաքական լուսավորության բնագավառում առհասարակ, այնպես և հատկապես բանվորական բնագավառում, պետք է տոգորված լինի պրոլետարիատի դասակարգային պայքարի ոգով, հանուն նրա դիկտատուրայի նպատակների հաջող իրագործման, այսինքն՝ հանուն բուրժուազիայի տապալման, դասակարգերի ոչնչացման, հանուն մարդու ձեռքով մարդու ամեն տեսակ շահագործման վերացման»¹ Լենինի այս հանճարեղ ցուցումը դարձավ սովետական գրականության իդեական զարգացման հիմքը:

Սովետական գրականության առաջին լավագույն ստեղծագործությունների մեջ արտացոլվել է Հոկտեմբերյան Ռևոլուցիայի հաղթանակով ճնշումից և շահագործումից ազատագրված ժողովրդական լայն մասսաների անօրինակ հերոսական պայքարը ընդդեմ օտարերկրյա ռազմական ինտերվենցիայի և սպիտակ գվարդիականների: Շարունակելով Ա. Մ. Գորկու հիանալի տրագիգիաները, նոր ստեղծվող սովետական գրականությունը ճշմարտացի կերպով ժողովրդին նկարագրում էր որպես իսկական պատմություն ստեղծողի: Այս ոգով են տոգորված Մայակովսկու պոեզիան, Սերաֆիմովիչի «Երկաթե հեղեղը», Ֆուրմանովի «Զապաևը», Ֆադեևի «Զախչախում», Տոլստոյի «Տառապանքի ուղիներով», Շոլոխովի «Խաղաղ Դոնը» և ուրիշ երկեր, որոնց մեջ ցույց է տրված սովետական կարգերի հաստատման դժվարին, բայց հերոսական ուղին:

Այդ ստեղծագործություններում նկարագրված մարտնչող ժողովրդի առաջին շարքերում մենք տեսնում ենք բոլշևիկներին, հատուկ ձուլվածքի տեր այն մարդկանց, որոնք մարմնավորում էին ռևոլուցիոն դարաշրջանի «միտքը, պատիվը և խիղճը» (Լենին): Ազնիվ երազմաբեկ մարդկանց ճնշումից և շահագործումից ազատագրելու մասին, կոմունիզմի մասին, անձնագոհ պայքարը այդ երազանքի կենսագործման համար, սովետական գրականության լավագույն կերպարների հիմնական հատկությունն է: Զապաևի և կոմիսար Կլիչկովի (Ֆուրմանով—«Զապաև»), Լեվինսոնի (Ֆադեև—«Զախչախում»), Իվան Դոբրայի (Տոլստոյ—«Հաց») կերպարները տոգորված են անցյալի ամեն տեսակ ստորությունները վերացնելու, մարդկանց կյանքը վերափոխելու մեծ իդեալով: Այդ խիզախ և անհողողող կամքի տեր մարդկանց հայացքը կյանքի մասին ն. Ոսարովսկին արտահայտել է հետևյալ հիանալի խոսքերով. «Ամենաթանկը մարդու համար կյանքն է: Նա տրվում է միայն մեկ անգամ, և դա պետք է ապրել այնպես, որպեսզի տանջալից ամոթ չզգաս աննպատակ ապրած տարիների համար, որպեսզի ամոթը չայրի ստոր և մանր անցյալի համար, որպեսզի մեռնելիս կարողանաս ասել. ամբողջ կյանքս և ամբողջ ուժերս տրվել են աշխարհում ամենագեղեցիկ բանին, մարդկության ազատության պայքարին»:

Օտարերկրյա ինտերվենցիայի և քաղաքացիական պատերազմի լիկվիդացումից հետո սովետական երկիրը սկսեց վերականգնել քայքայված ժողովրդական տնտեսությունը: Նոր խնդիրներ էին բարձրանում մեր գրականության առաջ, խնդիրներ, որոնք մեկնաբանվեցին ՌԿ(Բ)Պ Կենտկոմի 1925 թ. հունիսի 18-ի «Պարտիայի քաղաքականությունը գեղարվեստական գրականության բնագավառում», բանաձևի մեջ: ՌԿ(Բ)Պ Կենտկոմը նշում էր... «Ինչպես որ մեզ մոտ ընդհանրապես չի դադարում դասակարգային պայքարը, ճիշտ

¹ В. И. Ленин, Сочинения, т. 31, стр. 291.

աւղապետ էլ նա չի գաղափարում նաև գրական ճակատում: Դասակարգային հասարակութեան մեջ չկա և չի կարող լինել շեղոք արվեստ, թեև արվեստի և մասնավորապես գրականութեան դասակարգային քննութիւնը ընդհանրապես արտացոլվում է անսահմանորեն ավելի բազմապիսի ձևերով, քան, օրինակ, քաղաքականութեան մեջ»: Պարզաբանելով սովետական գրականութեան զարգացման խնդիրները, ՌԿ(բ)Պ Կենտկոմը միաժամանակ արձանագրում էր. «պրոլետարական գրողների հեգեմոնիա դեռևս չկա, և պարտիան պետք է այդ գրողներին օգնի պատմական իրավունք վաստակելու այդ հեգեմոնիայի համար»: Լենինի—Ստալինի պարտիայի անսահման հոգատարութեան և ամենօրյա օգնութեան շնորհիվ, վճռական պայքար մղելով գրականութեան մեջ հակասովետական և կոնտրռեւոլուցիոն հոսանքների դեմ, սովետական գրականութիւնը ստեղծագործական նորանոր նվաճումներով ընթանում էր պրոլետարական գրականութեան հեգեմոնիայի պատմական իրավունքը վաստակելու ուղիով:

Այդ տարիներին մեր գրականութիւնը հարստացավ սովետական մարդկանց աշխատանքային սխրագործութեան գեղարվեստական վերարտադրումով: Ֆ. Գլադկովի «Ցեմենտ» վեպը առաջին ծավալուն երկն էր, որտեղ Մ. Բորկով զնահատութեամբ նկարագրվում էր աշխատանքային ամենանշանակալից թեման— աշխատանքը: Գլադկովը նկարագրում է մեծ գործարանի վերականգնումը, որը այդ ժամանակ դեռևս դժվարին մի գործ էր, բայց նոր կյանքի ստեղծման սլաթոսով տոգորված մարդիկ հաղթահարում են դժվարութիւնները, փոխվում աշխատանքի մեջ:

Այդ տարիներին զարգացման նոր աստիճանի է հասնում սովետական դարաշրջանի լավագույն, տաղանդավորագույն բանաստեղծ Վ. Մալակովսկու ստեղծագործութիւնը, որի իդեական և գեղարվեստական վիթխարի ուժը պայմանավորված էր բանաստեղծի օրգանական կապով ժողովրդի և պարտիայի հետ: Վ. Բ. Լենինի կյանքի և գործունեութեան ստալինյան մեկնաբանութեան շիման վրա Մալակովսկին ստեղծում է սովետական գրականութեան խոշորագույն երկերից մեկը՝ «Գլադիմիր Իլյիչ Լենին» պոեմը: Մալակովսկին վառաբանում էր բոլշևիկների պարտիան, սովետական ստեղծագործ մարդուն, սոցիալիստական հայրենիքը: Նա գրում է.

И я
Как весну человечества
Рожденную
в трудах и в бою
Пою
мое отчество,
Республику мою!

Մալակովսկին սոցիալիստական ռեալիզմի պոեզիայի հիմնադիրն է, նրա անմահ ստեղծագործութիւնը դարձել է սովետական մարդկանց զաղափարական և գեղարվեստական դաստիարակութեան կարևոր զենքը:

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռեւոլուցիայից հետո սովետական գրականութեան և արվեստի առաջընթաց զարգացման ամեն մի քայլը սերտորեն կապված է ընկեր Ստալինի անվան հետ: Սովետական գրականութեան մեջ առատահայտված բոլոր մեծ իդեաների անսպառ ակունքը եղել է և մնում է Լենինի և Ստալինի ստեղծագործական մեծ ուսմունքը:

Սովետական գրականության և արվեստի զարգացման բոլոր հիմնական ուղիքները մշակել և խորացրել է ընկեր Ստալինը, ստեղծելով բոլոր նախապայմանները նրանց կենսագործման համար։ Սովետական կուլտուրան ընկեր Ստալինը սահմանել է որպես ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրա։ 1925 թ. մայիսի 18-ին ելույթ ունենալով արևելքի ժողովուրդների կոմունիստական համալսարանի ուսանողների ժողովում ընկեր Ստալինն ասաց. «Մենք պրոլետարական կուլտուրա ենք կառուցում։ Այս միանգամայն ճիշտ է։ Բայց ճիշտ է նաև այն, որ իր բովանդակությամբ սոցիալիստական՝ պրոլետարական կուլտուրան, նայած լեզվի, կենցաղի և այլն տարբերության, արտահայտման զուսպան ձևեր ու եղանակներ է ընդունում սոցիալիստական շինարարության ասպարեզ ներքաշված զանազան ժողովուրդների մոտ։ Իր բովանդակությամբ պրոլետարական, ձևով ազգային, — այսպես է այն համամարդկային կուլտուրան, դեպի որը ընթանում է սոցիալիզմը։ Պրոլետարական կուլտուրան չի վերացնում ազգային կուլտուրան, այլ բովանդակությամբ է տալիս նրան։ Եվ ընդհակառակը, ազգային կուլտուրան չի վերացնում պրոլետարական կուլտուրան, այլ ձև է տալիս նրան»¹։

Ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրայի մասին ընկեր Ստալինի ուսմունքի մեծ ուժը և կենսունակությունը փայլուն կերպով ցուցատվել է մեր բազմազգ սովետական գրականության հսկայական նվաճումներով, նրա օրրստորե աճող համաշխարհային նշանակությամբ։ Սոցիալիստական ազգությունների գրականությունը անբաժանելի է կոմունիզմի համար մղվող պայքարից։ Իրանում արտահայտվում է մեր գրականության միասնական սոցիալիստական բովանդակությունը, որը դրսևորվում է ազգային տարբեր ձևերի միջոցով։ Սովետական բազմազգ գրականության մեջ առաջատար տեղ է գրավում ռուս մեծ և ականավոր ժողովրդի գրականությունը, որի հայտնագործած ուղիներով զարգանում է սովետական միության եղբայրական ժողովուրդների և ամբողջ աշխարհի պրոգրեսիվ գրականությունը։

Մերկացնելով Մառի «ուսմունքի» հակագիտական էությունը, ընկեր Ստալինը գրում է. «Ն. Յա. Մառը իրոք ցանկանում և աշխատում էր մարքսիստ լինել, բայց նա չկարողացավ մարքսիստ դառնալ։ Նա մարքսիզմի լուրջ միայն հասարակացնողն ու գոհակացնողն էր, ինչպես «պրոլետկուլտականները» կամ «ռապապականները»։ Շարունակելով «պրոլետկուլտականների» վնասակար գործունեությունը, «ռապապականները» խեղաթյուրում էին պարսիայի քաղաքականությունը գրականության բնագավառում և արգելքներ ստեղծում սովետական գրականության զարգացման համար։ Հասարակացնելով և գոհակացնելով մարքսիզմը, «ռապապականները» հրապարակ նետեցին դոգմայի վերածված «դիալեկտիկա-մատերիալիստական ստեղծագործական մեթոդը», որը հանգում էր գրականության սպեցիֆիկ առանձնահատկությունների, մասնավորապես սովետական կյանքի ճշմարտացի, ռեալիստական արտացոլման բացասմանը։

Վ. Ի. Լենինը դեռևս 1905 թվին, «Պարտիական կազմակերպություն և սլարտիական գրականություն» հոդվածում ցուցում էր տալիս, որ գեղարվեստական ստեղծագործության բնագավառում «անպայման անհրաժեշտ է ապահովել անձնական նախաձեռնություն, անհատական հակումների առավել ազա-

¹ Ի. Վ. Ստալին, Իրկեր, հատ. 7, էջ 132։

² Ի. Վ. Ստալին, Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը, էջ 73։

տություն, մտքի ու երևակայության, ձևի ու թույլանդակության առավել ազատություն»։ Խեղաթյուրելով բոլշևիկյան պարտիայի ցուցումները գրականության զարգացման մասին, «Ռապականները» շաբլոն կերպով գրականությունը նույնացնում էին պրոլետարիատի պարտիական գործի մյուս մասերի հետ։ Նրանք փորձում էին գրական կազմակերպությունը վերածել սոցիալիստական շինարարության անմիջական խնդիրներից կտրված գրողների աշխատավորական մի խմբակի։

Ընկեր Ստալինը իր նամակում՝ ուղղված դրամատուրգ Բիլլ--Բելոցեր-կովսկուն, անդրադառնալով ՌԱՊՊ-ի գրական քաղաքականության հարցերին, գրում է.

«Ես սխալ եմ համարում գեղարվեստական գրականության մեջ (նշանակում է նաև թատրոնում) «աջերի» ու «ձախերի» բուն հարցադրումը։ «Աջ» կամ «ձախ» հասկացողությունը ներկայումս մեր երկրում պարտիական, իսկապես ասած՝ ներպարտիական հասկացողություն է։ «Աջերը» կամ «ձախերը» այն մարդիկ են, որոնք գուտ պարտիական դժից թեքվում են դեպի այս կամ այն կողմը։ Ուստի տարօրինակ կլիներ այդ հասկացողությունները կիրառել այնպիսի ոչ-պարտիական և անհամեմատ ավելի լայն բնագավառի նկատմամբ, ինչպես գեղարվեստական գրականությունը, թատրոնը և այլն»։¹ Ներպարտիական հասկացողությունները մեխանիկորեն փոխադրելով գրականության բնագավառը «Ռապականները» փաստորեն աղավաղում էին, գլխիվայր շրջում բոլոր հասկացողությունները և իրենց վնասակար լոգոնգներով արգելքներ ստեղծում իսկական սովետական գրողների ստեղծագործական աշխատանքների համար։ Պատահական չէ այն, որ «Ռապականները» մանր բուրժուական դրող էին համարում պրոլետարիատի խոշորագույն արվեստագետ, սովետական գրականության հիմնադիր Ա. Մ. Եփրեյն, հալածում և զրպարտում էին սովետական դարաշրջանի տաղանդավորագույն բանաստեղծ Վ. Մայակովսկուն, Մ. Շոլոխովին, Ա. Տոլստոյին և ուրիշներին։

ՌԱՊՊ-ի մեջ տիրող արակչեկյան ուժերի, գրական «խշխանագունների» բյուրոկրատիզմի և անհոգի վերաբերմունքի հետևանքով մոռացության էին մատնվել երիտասարդ գրական ուժերը։ Դատապարտելով «Ռապականների» այդ վնասակար քաղաքականությունը, րնկեր Ստալինը գրում է. «Մենք ունենք հարյուրավոր ու հազարավոր երիտասարդ ընդունակ մարդիկ, որոնք բոլոր ուժերով աշխատում են ճանապարհ բանալ ներքևից դեպի վեր, որպեսզի իրենց լուծան մտցնեն մեր շինարարության ընդհանուր գանձարանի մեջ։ Բայց նրանց փորձերը հաճախ մնում են ապարդյուն, որովհետև ամեն քայլափոխում նրանց լռեցնում են գրական «անունների» ինքնահավանությունը, մեր որոշ կազմակերպությունների բյուրոկրատիզմն ու անհոգի վերաբերմունքը, վերջապես, հասակակիցների նախանձը (որը դեռևս չի փոխվել մրցության)։ Մեր խնդիրներից մեկն է՝ ճեղք բանալ այդ խուլ պատի մեջ և ելք տալ երիտասարդ ուժերին, որոնց անունը լեգիոն է»։

Երականության մեջ ստեղծագործական մրցության կազմակերպումը րնկեր Ստալինը համարում էր սովետական գրականության դարգացման կարևոր նախապայմաններից մեկը։ Ընկեր Ստալինն ասում է, որ շատ հեշտ է

¹ Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 11, էջ 372։

² Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 12, էջ 129։

«քննադատել» և ոչ պրոլետարական գրականության արգելում պահանջել: «Եւայց չի կարելի ամենահեշտը համարել ամենալավը: Եւան արգելումը չէ, այլ այն, որ մրցության կարգով քայլ առ քայլ բեմից դուրս մղենք ոչ-պրոլետարական հին ու նոր մակուղատուրան, ստեղծելով մակուղատուրան փոխարինելու ընդունակ՝ սովետական բնույթի իսկական, հետաքրքիր, գեղարվեստական պիեսներ: Իսկ մրցությունը մեծ և լուրջ գործ է, որովհետեւ միայն մրցութիւն պայմաններում կարելի կլինի հասնել մեր պրոլետարական գեղարվեստական գրականության ձեակերպմանն ու բյուրեղացմանը»:

Սոցիալիստական բազիսի և սովետական հասարակության կյանքում տեղի ունեցած մեծագույն փոփոխությունների հիման վրա, ստալինյան առաջին հնգամյակի տարիներին ավարտվեց մեր գրականության ձեակերպման ու բյուրեղացման պրոցեսը, դրանով իսկ ավարտվեց գրականության դարգացման առաջին ժամանակաշրջանը և սկսվեց երկրորդ ժամանակաշրջանը:

* *

ՀամԿ(բ)Պ պատմության համառոտ դասընթացում ընկեր Ստալինը գրում է. «Որպես առաջին հնգամյա պլանի կատարման արդյունք, մեր երկրում կառուցվեց սոցիալիստական էկոնոմիկայի անսասան հիմքը — առաջնակարգ սոցիալիստական ծանր ինդուստրիա և մեքենայացված կոլեկտիվ հողագործություն, ոչնչացվեց գործազրկությունը, ոչնչացվեց մարդու շահագործումը մարդու կողմից, պայմաններ ստեղծվեցին մեր հայրենիքի աշխատավորության նյութական ու կուլտուրական դրութիւն անընդհատ բարելավման համար»:² Սոցիալիստական էկոնոմիկայի հիմքի կառուցումը հանդիսացավ պրոլետարական գրականության ձեակերպման ու բյուրեղացման նախապայմանը:

Ընկեր Ստալինի նախաձեռնությամբ ՀամԿ(բ)Պ Կենտկոմը 1932 թ. ապրիլի 23-ին որոշում ընդունեց գրական գեղարվեստական կազմակերպությունների վերակառուցման մասին: ՀամԿ(բ)Պ Կենտկոմը արձանագրում էր, որ սոցիալիստական շինարարության հաջողությունների հիման վրա վերջին տարիներս գրականության և արվեստի թե՛ բանական և թե՛ որական աճ է տեղի ունեցել: Ներկայումս, երբ արդեն աճել են պրոլետարական գրականության և արվեստի կադրեր, առաջ են եկել նոր գրողներ ու արվեստագետներ, գոյություն ունեցող գրական կազմակերպությունների շրջանակները արդեն նեղ են թվում և արգելակում են գեղարվեստական ստեղծագործության լուրջ թափը: Նշելով դրանից՝ ՀամԿ(բ)Պ Կենտկոմը որոշում է. լիկվիդացնել պրոլետարական գրողների ասոցիացիան և Սովետական իշխանության պլատֆորմը պաշտպանող ու սոցիալիստական շինարարությանը մասնակցելու ձգտող բոլոր գրողներին միավորել սովետական գրողների միասնական միության մեջ:

1932 թ. հոկտեմբերի 26-ին, Ա. Մ. Գորկու բնակարանում զրուցելով մի խումբ գրողների հետ, Ի. Վ. Ստալինը գրողներին անվանեց «մարդկային հոգու ճարտարապետներ», պարզ և հանձարեղ կերպով սահմանելով սովետական գրողի ստեղծագործական աշխատանքի չերն ու նշանակությունը սովետական հասարակության մեջ: Լինել մարդկային հոգու ճարտարապետ, նշանակում է իրականությունն արտացոլել ճշմարտացիորեն, արտացոլել իր ուսուցիչն զարգացման մեջ, նշանակում է ակտիվորեն օժանդակել աշխատավոր-

¹ Ի. Վ. Ստալին, Երկեր, հ. 11, էջ 374:

² ՀամԿ(բ)Պ պատմություն, համառոտ դասընթաց, 1946, էջ 450:

րության կոմունիստական դաստիարակության գործին, կոմունիզմի կառուցման մեծ գործին: «Մարդկային հոգու ճարտարապետներ» ստալինյան սահմանումը ցույց է տալիս սովետական գրականության, որպես վերնաշենքի մեծագույն ակտիվ դերը սոցիալիստական քաղաքի ձևավորման և ամրապնդման գործում: Պատմական ոչ մի ժամանակաշրջանում գրականությունը չի ունեցել այնքան մեծ նշանակություն հասարակության առաջընթաց զարգացման համար, ինչպես սոցիալիզմի կառուցման ժամանակաշրջանում: Անցյալի խոշորագույն արվեստագետները խավարի և տգիտության, տաժանակիր աշխատանքի և շահագործման, ճնշման և հալածանքի պայմաններում զրկված էին ժողովրդի հետ սերտորեն կապվելու հնարավորությունից: Լենինը նշում է այն հսկայական քոր, որ Տոլստոյի նման վիթխարի հանճարի ստեղծագործությանը ծանոթ է Ռուսաստանի բնակչության շնչին փոքրամասնությունը միայն, որ նրա մեծ երկերը իրոք բոլորի սեփականությունը դարձնելու համար անհրաժեշտ է սոցիալիստական հեղաշրջում:

Միայն սոցիալիզմն է ստեղծում անսահման հնարավորություններ գրականության լիակատար ծաղկման համար, միայն սոցիալիզմի պայմաններում է գրողը դառնում իր գործի իսկական նշանակությամբ մարդկային հոգու ճարտարապետ:

ՀամԿԵՊ Կենտկոմի 1932 թվի ապրիլի 23-ի պատմական որոշումը, սովետական գրողները որպես «մարդկային հոգու ճարտարապետներ», և սովետական գրականության ստեղծագործական մեթոդի՝ սոցիալիստական ուսուցիչի ստալինյան սահմանումները անսասան հիմք դարձան սովետական գրականության երկրորդ ժամանակաշրջանի (որը հիմնականում համընկնում է ստալինյան հեղամյակների ժամանակաշրջանին) հարաճուն զարգացման համար:

Սովետական գրողների համամիութենական առաջին համագումարում արտասանած ճառում Ա. Ա. ժգանովը, բնութագրելով սովետական գրականության առանձնահատկությունները, միաժամանակ հանգամանորեն մեկնաբանում է մեր գրականության առաջնահերթ խնդիրները՝ ելնելով ընկեր Ստալինի սահմանած սովետական գրականության և արվեստի վսթետիկական սկզբունքներից:

Ա. Ա. ժգանովն ասում է, որ գրողների համամիութենական համագումարը տեղի է ունենում այնպիսի մի ժամանակաշրջանում, երբ սոցիալիստական շինարարության ճանապարհին ծառացած հիմնական դժվարությունները մենք արդեն հաղթահարել ենք, երբ կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ և մեր մեծ առաջնորդ և ուսուցիչ ընկեր Ստալինի հանճարեղ առաջնորդությամբ վերջնականապես հաղթանակեցին սոցիալիստական կարգերը, Սովետական Միությունը դարձավ առաջավոր ինդուստրիալ երկիր և աշխարհիս ամենախոշոր սոցիալիստական հողագործության երկիրը: Փոխվեց սովետական երկրի ամբողջ կերպարանքը: Արմատապես փոխվեց մարդկանց փոսակցությունը: «Մարքսի-Էնգելսի-Լենինի-Ստալինի մեծ դրոշը հաղթանակ տարավ, հատկապես այդ դրոշի հաղթանակին ենք պարտական, որ այստեղ հավաքվել է սովետական գրողների առաջին համագումարը: Եթե այդ հաղթանակը չլիներ, ձեր համագումարն էլ չէր լինի: Բացի մեզանից՝ բոլշևիկներից, ոչ ոք չէր կարող հրավիրել այսպիսի համագումար»¹:

¹ А. А. Жданов, Советская литература – самая идейная, самая передовая литература в мире. Партиздат, 1934, էջ 8:

Բնութագրելով սովետական գրականությունը, Ա. Ա. Ժդանովն ասում է, որ սովետական գրականության հաջողությունները պայմանավորված են սոցիալիստական շինարարության հաջողություններով, նրա աճումը մեր սոցիալիստական իրավակարգի հաջողությունների և նվաճումների արտահայտությունն է: «Չկա և երբեք չի եղել մի գրականություն, բացի սովետական գրականությունից, որը պայքարի կազմակերպեր աշխատավորներին և ճնշվածներին վերջնականապես ոչնչացնելու ամբողջ և ամեն տեսակ շահագործումը, վարձու ստրկության լուծը: Չկա և երբեք չի եղել այնպիսի գրականություն, որն իր ստեղծագործությունների թեմատիկայի հիմքն է դարձնում բանվոր դասակարգի ու գյուղացիության կյանքը և նրանց պայքարը սոցիալիզմի համար»:¹

Սովետական գրականությունը հետևողականորեն պաշտպանում է բոլոր ազգերի իրավահավասարությունը, վճռականորեն մերժելով խավարամտության, միստիկայի և կղերականության ամեն մի արտահայտություն: Սովետական գրողները իրենց ստեղծագործությունների համար նյութ, թեմատիկա, պատկերներ, գեղարվեստորեն խոսք են քաղում մեր երկրի բոլոր մասերում եղացող սովետական մարդկանց ստեղծարար գործունեությունից:

Սովետական գրականության հիմնական հերոսները նոր կյանքի ակտիվ կառուցողներն են՝ բանվորները, կոլխոզնիկները, պարտիականները, կոմերիտականները, տնտեսավարները, ինժեներները: Սովետական գրականությունը ուժեղ է նրանով, որ ծառայում է նոր գործի՝ սոցիալիստական շինարարությանը:

Ա. Ա. Ժդանովն ասում է. «Ընկեր Ստալինը մեր գրողներին անվանեց «մարդկային հոգու ճարտարապետներ»: Ի՞նչ է նշանակում այդ: Ի՞նչ պարտականություններ է դնում ձեզ վրա այդ կոչումը»: Ա. Ա. Ժդանովը բացատրում է, որ այդ նախ և առաջ նշանակում է խորապես ճանաչել և ճշտորեն պատկերել կյանքը, պատկերել ոչ թե սխալաստիկորեն, ոչ թե մեռած կերպով, այլ իրականությունը պատկերել իր ռեզուլտիտ զարգացման մեջ: «Ըստ այդմ գեղարվեստական պատկերման ճշմարտությունը, պատմական կոնկրետությունը պետք է զուգակցվի աշխատավոր մարդկանց սոցիալիզմի ոգով գաղափարական վերափոխման ենթարկելու, դաստիարակելու խնդրին: Գեղարվեստական գրականության, գրական քննադատության այդ մեթոդն է, որ մենք անվանում ենք սոցիալիստական ռեալիզմի մեթոդ»:²

Իհնել մարդկային հոգու ճարտարապետ, նշանակում է երկու ուղիով կանգնած լինել ռեալ կյանքի հողի վրա, իսկ այդ նշանակում է խզումն հին տիպի ռոմանտիզմից, որը պատկերելով գոյություն չունեցող կյանք և գոյություն չունեցող հերոսներ, ընթերցողներին կյանքի հակասություններից և ճնշումից տանում էր դեպի անիրական աշխարհ: Մեր գրականության համար չի կարող խորթ լինել ռեզուլտիտ ռոմանտիկան, որը սոցիալիստական ռեալիզմի բաղկացուցիչ մասն է: «Սովետական գրականությունը պետք է կառողանա տալ մեր հերոսներին, պետք է կառողանա տեսնել մեր վաղվա օրը: Դա ուտոպիա չի լինի, որովհետև մեր վաղը պատրաստվում է արդեն այսօր պլանաչափ, գիտակից աշխատանքով»:³

¹ А. А. Жданов, Советская литература—самая идейная, самая передовая литература в мире. Партиздат, 1934, էջ 8:

² Նույն տեղում, էջ 11—12:

³ Նույն տեղում, էջ 13:

Ա. Ա. Ժդանովը մարդկային հողու ճարտարապետ լինելու կարևոր պայման է համարում նաև գրական գործի տեխնիկայի իմացությունը, ակտիվ պայքարը լեզվի կուլտուրայի համար, ստեղծագործությունների որակի համար: Սովետական գրականությունը զենքի շատ տեսակներ ունի՝ գրական ստեղծագործության ժանրերը, ոճերը, ձևերն ու եղանակները, իրենց բազմակողմանիությամբ և լիակատարությամբ: Դրողի պարտականությունն է քննադատորեն յուրացնել անցյալի գրական ժառանգությունը, կատարելագործել և զարգացնել գրական վարպետությունը:

Ստալինյան առաջին հնգամյակների տարիներին սոցիալիստական ուսուցիչի մեթոդը դարձավ ամբողջ գրականության հիմնական ստեղծագործական մեթոդը: Հսկայական չափով բարձրացավ մեր գրականության դերը և նշանակությունը սոցիալիզմի կառուցման գործում:

Սովետական մարդու աշխատանքային անօրինակ սխրագործության այդ անմոռանալի ժամանակաշրջանը ցայտուն գծերով վերարտադրվեց մեր գրականության մի շարք լավագույն երկերի մեջ: Ֆ. Գլադկովի «Էներգիա», Լ. Լեոնովի «Սոս», Մ. Շահինյանի «Հիգրոցենտրալ», Վ. Կատանի «Ժամանակ, առա՛ջ», Յու. Կրիմովի «Տանկեր Դերբենտ» և մի շարք այլ գործերի մեջ կենդանի կերպարների միջոցով վերարտադրվել է, թե ինչպես աշխատանքն անաչառ և տաժանակիր պարհակից, ինչպես կապիտալիզմի ժամանակ էր, սոցիալիզմի պայմաններում դարձավ պատվի, փառքի և հերոսության գործ: Մերկացնելով բուրժուական-սեփականատիրական աշխարհը և նրա խղճուղիքի, սովետական գրականությունը փառաբանեց հաղթանակած սոցիալիզմի երկրի ստեղծագործական կյանքի աննման գեղեցկությունը, սովետական մարդկանց աշխարհը վերափոխող անսահման ուժը:

Պատմական այդ ժամանակաշրջանում մեր երկրի կյանքի մեջ խոշորագույն իրադարձություն էր գյուղատնտեսության կոլեկտիվացումը, ուսուցիչն ամենախորը մի հեղաշրջում, որն իր հետևանքներով 1917 թվի հոկտեմբերի ուսուցիչն հեղաշրջմանը հավասար նշանակություն ուներ: Գյուղատնտեսության կոլեկտիվացման պրոցեսը արտացոլվել է Մ. Շոլխովի «Հերկած խուպան», Ֆ. Պանֆերովի «Ձողեր», Ա. Տվարդովսկու «Երկիր Մուրավիա» և այլ գործերում, որոնց մեջ ցույց է տրված գյուղացիական միլիոնավոր մասնատների հոգեբանության վերափոխումը, ցույց է տրված, թե ինչպես բուլճարիկների պարտիան գյուղացիությանը ազատագրեց կուլակային ստրկությունից, օգնեց գյուղացիությանն ընթանալու կոլսոցային կյանքի երջանիկ ուղիով:

Սովետական կինոյի 15-ամյակի առթիվ՝ իր ողջունի խոսքում ընկեր Ստալինը հանձարեղ կերպով բնութագրեց սովետական կինոյի գաղափարական-գեղարվեստական հիմքերը և կինո արվեստի մեծ նշանակությունը սոցիալիզմի կառուցման ժամանակաշրջանում: Այդ բնութագրությունը ամբողջությամբ վերաբերում է նաև սովետական գրականությանը, որը սովետական մոլորակի ձեռքին հսկայական անգնահատելի ուժ է: Տիրապետելով մասսաների վրա հոգևոր ազդեցություն գործելու բացառիկ հնարավորությունների, գեղարվեստական գրականությունն «օգնում է բանվոր դասակարգին և նրա պարտիային՝ դաստիարակել աշխատավորությանը սոցիալիզմի ոգով, կազմակերպել մասսաներին պայքարելու սոցիալիզմի համար, բարձրացնել նրանց կուլտուրական և քաղաքական մարտունակությունը»:¹

¹ Ленин, Сталин, Партия о кино, 1938, стр. 33.

Ստալինյան հնգամյականների տարիներին հզորացավ և բարգավաճեց սովետական հայրենիքը: ՍՍՌՍ ժողովուրդների բարոյական-քաղաքական միասնությունը, ժողովուրդների ստալինյան բարեկամությունը, սովետական հայրենասիրությունը դարձան սովետական հասարակության շարժիչ ուժերը: Սոցիալիզմը դարձավ սովետական մարդկանց նյութական և հոգևոր գոյության հիմքը: Սովետական հասարակության կյանքում տեղի ունեցած բոլոր մեծագույն փոփոխություններն իրենց արտացոլումը գտան Ստալինյան Կոնստիտուցիայի մեջ, որը նոր հեռանկարներ բացեց սովետական գրականության զարգացման համար:

Սովետական ժողովրդի Հայրենական Մեծ պատերազմի տարիներին ավելի ցայտուն կերպով դրսևորվեց սովետական գրականության մեծագույն ակտիվությամբ օժտված վերնաշենք լինելու հատկությունը: Ժողովրդի բոլոր ուժերի փորձության և ստուգման տյո տարիներին ակնառու կերպով հանդես եկավ սովետական հասարակական կարգի, սովետական իդեոլոգիայի, սովետական մարդու քաղաքականության անհամեմատելի գերազանցությունը:

Ընկեր Ստալինը Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլուցիայի 27-րդ տարեդարձի առթիվ տված իր գեկուցման մեջ ասաց. «Ներկայիս պատերազմի անօրինակ դժվարությունները շրնկճեցին, այլ էլ ավելի կոփեցին սովետական ժողովրդի կամքը և առնական ոգին: Մեր ժողովուրդը իրավամբ նվաճեց հերոսական ժողովրդի հռչակ»:

Հայրենական պատերազմի տարիներին սովետական գրականությունը արտացոլեց սովետական ժողովրդի անընկճելի կամքը, առնական ոգին, սովետական կենսատու հայրենասիրությամբ ոգեշնչված միլիոնավոր մարդկանց հավերժ անմահ սխրագործությունները ճակատում և թիկունքում: Բազմազան ժանրերի միջոցով մեր գրականությունը կերտեց կերպարները այն մարդկանց, որոնց հիմնական հատկությունն էր խիզախությունը, պայքարում վախ չունենալը, ժողովրդի հետ մեր հայրենիքի թշնամիների դեմ կռվելու պատրաստակամությունը:

Սովետական պոեզիայի վարպետներ Մ. Իսակովսկու, Ա. Սուրկովի, Ի. Սիմոնովի, Մ. Բաժանի, Ն. Զարյանի, Ս. Վուրզովի, Ս. Զիբովանու, Ա. Կուլեշովի բանաստեղծությունները հնչում էին որպես մարտակոչեր, ոգեշնչում սովետական մարդկանց արդարացի հայրենասիրական պատերազմը:

Ի. Էրենբուրգի և Ա. Տոլստոյի հրապարակախոսական հոդվածները, Վ. Գրոսմանի «Ժողովուրդն անմահ է», Բ. Գորբատովի «Անընկճելիները», Վ. Վասիլևսկայայի, «Ծիածանը», Ա. Կորնեյչուկի «Ֆրոնտը», Կ. Սիմոնովի «Ռուս մարդիկ» և շատ ուրիշ գործեր, ֆաշիստական հորդանների դեմ մղած պայքարում սովետական մարդկանց դրսևորած հիանալի հատկությունների գեղարվեստական լավագույն փաստաթղթերն են:

Հայրենական պատերազմի տարիներին գրականությունը մարտական հզոր զենքի ուժ ունեւր: Բազմաթիվ են այն օրինակները, թե ինչպես Մ. Գորկու վեպերի և պատմվածքների, Մայակովսկու բանաստեղծությունների, Ն. Օստրովսկու «Ինչպես էր կոփվում պողպատը» վեպի և Էրենբուրգի հոդվածների անմիջական ազդեցությամբ սովետական մարդիկ կատարում էին շտեպնված

հերոսություններ: Այդ օրինակները ցույց են տալիս, որ սովետական գրականությունը դարձել է կյանքի դասագիրք, բոլշևիկյան կենսատու իդեաների լավագույն պրոպագանդիստը:

ՀամԿ(բ)Պ Կենտկոմի պատմական որոշումները իդեոլոգիական հարցերի մասին մարտական ծրագիր հանդիսացան հետպատերազմյան ժամանակաշրջանի սովետական գրականության նոր վերելքի և բարգավաճման, սովետական ժողովրդի հոգևոր կուլտուրայի առատություն ստեղծելու համար:

ՀամԿ(բ)Պ Կենտկոմի որոշումների մեջ հատկապես ընդգծվում է սովետական գրականության և արվեստի՝ որպես վերնաշենքային երևույթի վիթխարի նշանակությունը սովետական մարդկանց և առանձնապես երիտասարդության դաստիարակության գործում: Բացահայտելով «Զվեզդա» և «Լենինգրադ» ամսագրերում թույլ տրված գաղափարական լուրջ սխալները, ՀամԿ(բ)Պ Կենտկոմը նշում է, որ մեր ամսագրերը չեն կարող լինել ապոլիտիկ, որովհետև ապոլիտիզմի, անիդեականության ամեն մի քարոզ վնասակար է սովետական ժողովրդի և սովետական պետության շահերին: Սովետական գրականությունը պետք է առաջնորդի այն բանով, որը կազմում է սովետական կարգի կենսական հիմքը, նրա քաղաքականությունը:

Վճռականապես դատապարտելով ապոլիտիզմի, գաղափարազրկության, ստորաքարշության և կոսմոպոլիտիզմի արտահայտությունները գրականության և արվեստի բնագավառում, «Զվեզդա» և «Լենինգրադ» ամսագրերի մասին որոշման մեջ ՀամԿ(բ)Պ Կենտկոմը ընդգծում է. «Սովետական գրականության, աշխարհի ամենաառաջավոր գրականության ուժն այն է, որ նա այնպիսի գրականություն է, որը շունի և շի կարող ունենալ այլ շահեր, քան ժողովրդի շահերը, պետության շահերը: Սովետական գրականության խնդիրն այն է, որ օգնի պետությանը՝ ճիշտ դաստիարակելու երիտասարդությանը, պատասխանելու նրա պահանջներին, դաստիարակելու նոր սերունդը առույգ, իր գործին հավատացող, արգելքներից չվախեցող, քոլոր արգելքները հաղթահարելու պատրաստ»:

Սոցիալիզմից աստիճանաբար կոմունիզմին անցնելու ժամանակաշրջանում հսկայական շահով աճում է գրականության հասարակական, քաղաքական և էսթետիկական նշանակությունը: Գրականության ամեն մի հաջողությունը ժողովուրդը դիտում է որպես իր հաղթանակը, ընդհակառակը՝ նրա ամեն մի անհաջողությունը խորապես վիրավորական և դառն է ժողովրդի, պարտիայի և պետության համար: Ա. Ա. Ժդանովը խորիմաստ կերպով պրականության յուրաքանչյուր հաջող երկ համեմատում է շահած ճակատամարտի, կամ տնտեսական քնագավառում տարած խոշոր հաղթանակի հետ:

Կոմունիստական պարտիայի, ընկեր Ստալինի ամենօրյա հոգատարության շնորհիվ, կենսագործելով բոլշևիկյան պարտիայի իմաստուն ցուցումները, պատկերելով սովետական մարդկանց լավագույն գծերն ու հատկությունները, ակտիվորեն պրոպագանդելով սովետական պետության քաղաքականությունը, սովետական գրականությունը ձեռք բերեց մեծ նվաճումներ: Մեր գրականությունը հարստացավ սոցիալիզմից աստիճանաբար դեպի կոմունիզմ անցնող ժամանակաշրջանն արտացոլող գեղարվեստական մեծ երկերով, որոնց կերպարների մեջ քաղահայտվում են մեր կյանքի մեծ իրադարձությունների գաղափարական իմաստը, սովետական դարաշրջանի մարդկանց ստեղծագործ աշխատանքի համաշխարհային պատմական նշանակությունը:

ՀամԿ(բ)Պ Կենտկոմի որոշումներից հետո անցած հինգ տարիների ընթացքում սովետական գրականության ավելի քան 150 ստեղծագործություններ Ստալինյան մրցանակի են արժանացել։ Ռուս առաջավոր գրականության վարպետների կողքին մենք տեսնում ենք սովետական միության եղբայրական ժողովուրդների լավագույն գրողներին, որոնք իրենց ստեղծագործություններով հարստացնում են սոցիալիստական աշխատանքի և խաղաղության գաղափարներով տոգորված սովետական գրականությունը։

Պ. Պավլենկոյի «Երջանկություն», Ս. Բաբանսկու «Ոսկե աստղի կավալերը», Բ. Պոլեվոյի «Պատմություն իսկական մարդու մասին», Մ. Բուբենովի «Սպիտակ կեչին», Վ. Աժանի «Մոսկվայից հեռու», է. Կազակեվիչի «Գարունն Օդերի վրա», Գ. Նիկոլաևայի «Հունձ», Ա. Կոժեվնիկովի «Կենսատու ջուրը», Վ. Զակրուտկինի «Լողացող ստանիցան» և բազմաթիվ այլ գործերի մեջ ճշմարտացիորեն վերարտադրվել է սովետական մարդկանց լավագույն հատկությունները։ Բատմանովը («Մոսկվայից հեռու»), Վորոպանը («Երջանկություն»), Տուտարինովը («Ոսկե աստղի կավալերը»), Ավդոտյա Բորտնիկովան («Հունձ»), Ա. Լուտոսինը («Կենսատու ջուր») սովետական իրական մարդկանց դեղարվեստական ընդհանրացումներն են, մարդիկ, որոնց աջօրվա աշխատանքի մեջ տեսնում ենք կոմունիզմի գալիքը։ Այդ վեպերը ցույց են տալիս, որ իսկական գեղեցկության աղբյուրը սովետական իրականությունն է, սովետական մարդկանց ստեղծագործ աշխատանքը։

Վ. Աժանի «Մոսկվայից հեռու» վեպում արտացոլված է սոցիալիստական աշխատանքի պոեզիան, աշխատանքի հասարակական մեծ նշանակությունը։ Բատմանովը կազմակերպում և հաջողությամբ ավարտում է գծվաքագույն պայմաններում կատարվող շինարարությունը։ Այն, ինչ հին և հետամնաց նորմաներին կառչած մարդիկ համարում էին տարիների գործ, Բատմանովի գլխավորած բանվորական կոլեկտիվը կատարում է ամիսների ընթացքում։ Միայն սովետական մարդկանց հատուկ նպատակի պարզությունը, նպատակին հասնելու համառությունը և բնավորության կայունությունը, որոնք հաղթահարում են ամեն տեսակ արգելքներ, կարող էին ապահովել այդպիսի փառավոր հաղթանակը։ «Մոսկվայից հեռու» վեպը բոլշևիկյան պարտիայի կազմակերպող և ուղղություն տվող ուժի լավագույն վերարտադրությունն է։

Առաջավոր կոլիտգների, սովխոզների գիտական փորձի ընդհանրացումով սովետական կառավարությունը որոշում ընդունեց ոռոգման նոր սխեմեի մասին, որը վիթխարի նշանակություն ունի մեր գյուղատնտեսության նոր վերելքի համար։ Կյանքի իրական փաստերի հիման վրա, Ա. Կոժեվնիկովը «Կենսատու ջուր» վեպում ցույց է տալիս, թե ինչպես սովետական մարդիկ ոռոգման նոր սխեմեի միջոցով շոր անապատը վերածում են բերքառատ դաշտերի։

Գ. Նիկոլաևայի «Հունձ», Ս. Բաբանսկու «Ոսկե աստղի կավալերը», Վ. Զակրուտկինի «Լողացող ստանիցան» վեպերում նկարագրվում է հետպատերազմյան ժամանակաշրջանի կոլխոզային աշխատանքը կոմունիզմի համար։ Այդ վեպերը վերարտադրում են, թե ինչպես մեր իրականության մեջ վերանում է մտավոր և ֆիզիկական աշխատանքի սահմանագիծը, թե ինչպես սովետական մարդու նովատորական աշխատանքը, նրա նախաձեռնությունը հիմնվում է իսկական փտության վրա։ Մեր գրականության վերջին տարիների նվաճումները ցույց են տալիս, որ կենսական ճշմարտացիության և կյանքի վե-

շափոխման մեծ ուժով տոգորված գրականությունը կարող է ստեղծվել միայն սոցիալիստական բազիսի հիման վրա:

ՀամԿ(Բ,Պ) կենտկոմի որոշումներից հետո անցած հինգ տարիների ընթացքում լուրջ նվաճումներ է ունեցել սովետաճաշ գրականությունը: Բնականական պարտիայի իմաստուն ցուցումներով սովետաճաշ գրողները վճռական պայքար ծավալեցին նացիոնալիզմի տեցիզիվների, ազգային սահմանափակության և անկումային արվեստի արտահատուկությունների դեմ: Մեր գրականության մեջ տիրապետող դարձավ ժամանակակից թեմատիկան, ավելի խորացավ գեղարվեստական երկերի գաղափարական-քաղաքական նպատակասլացությունը:

Հայաստանի բոլշևիկների 15-րդ համագումարը, արձագանքելով մեր գրականության նվաճումները հատկապես պոեզիայի, մանկական գրականության և դրամատուրգիայի բնագավառում, միաժամանակ նշեց, որ մեր գրականության առաջատար տեսակը՝ պրոզան գեղես հետ է մնում մեր ժողովրդի շոգևոր բարձր պահանջներից:

ՀԿ(Բ,Պ) 15-րդ համագումարում տված իր զեկուցման մեջ բնկ. Գր. Հարությունյանն ասաց. «Սովետաճաշ գրականության ամենալուրջ թերությունը արձակի գեղ շարունակվող հետամնացությունն է: Թեև հաշվետու շրջանում լույս են տեսել մի շարք խոշոր երկեր, այնուամենայնիվ դրանց մեծ մասը չի բավարարում սովետական բնիկերցողների աճող պահանջներին»: Մեր արձակագիրները թույլ են աշխատում իրենց պրոֆեսիոնալ մակարդակը բարձրացնելու վրա, դեռևս անբավարար են օգտագործում ուսու և եղբայրական ժողովուրդների պրոզայի հսկայական նվաճումները:

Սովետաճաշ գրականության, մասնավորապես արձակի հիմնական խրնդիրն է ավելի հետևողականորեն կենսագործել սոցիալիստական ռեալիզմի սկզբունքները, թափանցել մեր կյանքի մեծ բովանդակության մեջ, ճշմարտացիորեն նկարագրել սովետական մարդկանց լավագույն գծերը, անընդհատ կատարելագործել գեղարվեստական վարպետությունը:

Սովետական գրականության բովանդակությունը սովետական ջերմ, կենսատու հայրենասիրությունն է: Այդ վեհագույն զգացումը նորանոր սխրագործությունների է մղում սովետական մարդկանց կոմունիստական հասարակակարգի կառուցման գործում: Հետևաբար հայրենասիրության գաղափարի ամեն մի սխալ վերարտադրություն նշանակում է նահանջ սոցիալիստական բազիսի տկտիվ պաշտպանության դիրքերից, որը տանում է դեպի մեր ժողովրդին խորթ գաղափարախոսությունը:

Մեր պարտիայի կենտրոնական օրգան «Պրավդան» վերջերս ցույց տվեց ուկրաինական քանաստեղծ Վ. Սոսյուրայի «Սիրի'ր Ուկրաինան» բանաստեղծության նացիոնալիստական կությունը: Պետք է նշել, որ նացիոնալիզմի արտահայտություններից զերծ չէ նաև մեր սովետաճաշ պոեզիան: Բանաստեղծներ Ա. Դրաշու, Սարմենի, Հ. Շիրազի և ուրիշների առանձին բանաստեղծություններում հայրենասիրության գաղափարը երբեմն արտահայտվում է վերացական կերպով, կտրված սովետական իրականությունից, ժողովուրդների ստաթիկյան բարեկամության մեծ իդեալից: Այդպիսի արատավոր բանաստեղծությունների համար խորոշ է ազգային սահմանափակությունը, անցյալի իդեալականացումը, որը նացիոնալիզմի ալլաձևություններից մեկն է:

Նալիցինների արտահայտությունները պետք է վճռականորեն արմատախիլ արվեն, իրրև սովետական իդեոլոգիային միանգամայն խորթ, թշնամական գաղափարախոսությունն արտահայտություններ։ Նալիցինների ռեպրիզինները ցույց են տալիս, որ մի բանի գրողներ ղեռն լիովին չեն գիտակցում իրենց պատասխանատվությունը ժողովրդի, պետության և պարտիայի նկատմամբ, որ ղեռն գրական ստեղծագործական աշխատանքի բնագավառում տնտեսական, քաղաքական, բուրժուական քննադատությունը և ինքնաքննադատությունը։ Ա. Մ. Բորիսովն ուղղաձև ասում է՝ ընկեր Ստալինը գրում է. «Մենք չենք կարող առանց ինքնաքննադատության։ Ո՛չ մի կերպ չենք կարող Ալեքսեյ Մարսիմովի։ Առանց ինքնաքննադատության անխուսափելի էն ապարտի լճացումը, նեխվածությունը, բյուրոկրատիզմի աճումը, բանվոր դասակարգի ստեղծագործական նախաձեռնության ջլատումը»։ Գրականության մեջ նկատվող գաղափարական և ղեղարվեստական սխալների ու թերությունների բուրժուական սկզբունքային քննադատությունը սովետական գրականության նկատմամբ բարգավաճման կարևորագույն նախապայմանն է։

Սովետական գրականության հիմքը բուրժուական պարտիականությունն է, որն ուժ և կորույթ է տալիս մեր գրականությանը՝ ժողովրդի գործին ծառայելու համար։ Բուրժուական պարտիականությունը այն կենսական ուժն է, որ գրականությունը սերտորեն կապում է ժողովրդի հետ, գրականությունն օժտում է մասսաների վրա հոգևոր ներգործության վիթխարի ուժով։ Պրոպագանդելով բուրժուական պարտիայի քաղաքականությունը, որը սովետական կարգի կենսական հիմքն է, մեր գրականությունը նվաճել է համաշխարհային նշանակություն։ Մեր գրականության նշած ուղիներով են զարգանում Չինական ժողովրդական Ռեսպուբլիկայի, Գերմանական Դեմոկրատական Ռեսպուբլիկայի, Ժողովրդական դեմոկրատիայի երկրների՝ Լեհաստանի, Չեխոսլովակիայի, Բուլղարիայի, Ռումինիայի, Հունգարիայի, Ալբանիայի գրականությունները և ամբողջ աշխարհի առաջավոր գրականությունը։

Սովետական գրականության առաջնահերթ խնդիրը, նրա զարգացման ներկա ժամանակաշրջանում՝ գրականության իդեական բովանդակության խորացման և գեղարվեստական վարպետության բարձրացման հարցն է։ Մեր գրականության այդ կարևոր խնդրի լուծման համար բացառիկ մեծ նշանակություն ունի ընկեր Ստալինի «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը» հանճարեղ աշխատությունը։ Ընկեր Ստալինի աշխատությունը սովորեցնում է տիրապետել լեզվին, որը գրականության հիմքն է, նրա գոյության ձևը, և սովորեցնում է ճշմարտացիորեն նկարագրել կոմունիզմի և ստեղծագործ աշխատանքի անբաժանելիությունը, այդ հանճարեղ աշխատությունը սովորեցնում է ստեղծագործական մարքսիզմի գիտությունը, որը հանդիսանում է սովետական գրականության զարգացման անխախտ հիմքը։